

ԳՐԻԳՈՐ ՏՂԱ*

Գրիգոր Տղան եկեղեցական շինարարության հետ զբաղվում է նաև գիտական գործերով: 1173 թվականին սրվել էին Լամբրոնի Օշինյանների և Ռուբինյանների հարաբերությունները: Հեթում իշխանը, անսալով բանասարկու հույների և տաճարական ասպետների խորհուրդներին, չէր ուզում հնազանդվել Մլեհի գլխավորած Կիլիկիայի իշխանությունը: Որպեսզի գործը զենքի և արյունահեղությամբ չհասնի, Գրիգոր Տղան գնաց Լամբրոն, հաշտություն կայացրեց և նպատակով: Նրա ջանքերով երկու նշանավոր տոհմերի միջև ստեղծվեց լավ հարաբերություն և ամրապնդվեց ազգային իշխանության միասնությունը: Տղայի կրոնական, հասարակական գործունեության հիմնական առանցքն են կազմում այն թղթերը կամ նամակները, որոնք նա գրել է եկեղեցիների միություն վերաբերյալ: Եկեղեցիների միության խնդիրը դեռ չլուծված, Շնորհալու վախճանվեց: Գրիգոր Տղան դեռ նոր էր անցել հայրապետական պաշտոնին, երբ հույների Մանվել կայսրը նորից նամակներով արժարժեց այդ հարցը: 1173 թվականին կայսրը Շնորհալու մահվան առթիվ ցավակցական մի նամակ գրեց Գրիգոր Տղային և ափսոսանք հայտնեց, որ Շնորհալու վախճանումով միության գործը մնաց անկատար: Կայսրը միաժամանակ հաղորդում էր հայոց կաթողիկոսին, թե «սկսեալն նախնոյն յերանելի հօրէն բո ի ձեռն բո կատարեսցի»¹⁶: Գրիգոր Տղան անշեղ կերպով հետևում էր իր հորեղբորը և զործում նրա սկզբունքներով ու ոգով եկեղեցիների միության հարցում:

Կայսեր նամակին Գրիգոր Տղան բացասական պատասխան գրեց և հայտնեց Մանվելին, որ ինքն իր գործունեությամբ երբեք չի շեղվելու իր նախորդի՝ Շնորհալու բնթացքից. «... Եւ իմ նուաստութիւնս նորին փառքից. «... Եւ իմ բանիցն աշակերտ և փայաջորդ՝ նորին է և բանիցն աշակերտ և փայաջորդ»¹⁷: Այս նամակում Գրիգոր Տղան համարձակորեն պահանջում է «թեթևացուցանել խնդրեմք ի նախակարգեալ գլխոցն, մինչև ուղղի աստուածային խաղաղութիւն, և այնուհետև ինքն սէրն ծնանի և բուսուցանէ զորս իւր աճմանն է օժանդակ»¹⁸: Տղան մերժում է նաև Մանվելի առաջարկը՝ Հայ Եկեղեցու դավանության մասին մի նոր «հուստոց գիր» ներկայացնելու, ինչպես Ներսես Շնորհալին 7 տարի առաջ գրել էր իր «Գիր հաւատոյ»-ն: Տղան թագավորի այդ առաջարկի մերժումը հիմնավորում է այսպես. «Այլ զհաւատոյ բան ոչինչ կարօտ է երկրորդ անգամ լսել ի մէնջ աստուածասէր թագաւորդ, զի զնոյն ինքն զերանելի հայրապետն մեր զներսէս կենդանի բանիւմ իւրով ունիմք առաջնորդ առ Քրիստոս խոստովանութեանն ի մէջ մեր...»¹⁹: Մանվելը երբեք չէր սպասում, որ իր նամակին այդպիսի բացասական պատասխան է ստանալու: Սակայն, միության գործերում մեծ փորձ ունեցող կայսրը չհուսահատվեց: Նա նորից մի նամակ գրեց, ավելի շոյող ու քաղցրալեզու բան առաջինը: Այստեղ նա շուայլորեն զովաբանում է Գրիգոր Տղայի անձը, բարեմասնությունները, նրա մտավոր հարստությունները և այսպես. «... Ընկալաւ և մանաւանդ թագաւորութիւնս իմ զքո պատուականութեանդ

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից և 1965 թվականի № Ա-ից:

¹⁶ «Թուղթ ընդհանրական», էջմիածին, 1865. էջ 228:

¹⁷ Նույն տեղում, էջ 229:

¹⁸ Նույն տեղում, էջ 230:

¹⁹ Նույն տեղում (ընդգծումը մերն է):

նախադրութիւն՝ որ յաղագս այսց պատճառանաց, յորում ծանեայ զառաքինութիւն և զգիտութիւնն ընդ բնականդ քո բարի կամքով միատրեալ. զի զբարութե զայս խորհուրդ հանձնարով և հաստատութեամբ տնօրինէ քոյդ համակամութիւն...»²⁰։ Այնուհետեւ, ըստ երևույթին, հաշվի առնելով Գրիգոր Տղայի նամակում պահանջված «թեթեւացումներ»-ը, Մանվելը անում է զիջումներ և նույնիսկ խոստովանում է, որ իրենք ճիշտ չեն եղել և հիվանդագին աչքերով են նայել հայերին, իսկ հիմա այդ ախտից բժշկվել են։ «Մանիր և զայս,—գրում է Մանվելը իր երկրորդ նամակում,—զի զգայթակղութիւնն, որ կայր ի սիրտս մեր յերգս ձեր և ի պաշտամունս որ առ Աստուած՝ բժշկեցաք քննութեամբ, վասն զի ի մէջ ածաք և ծանեաք երեւելապէս ի նոցանէ, զի ի բազում տեղիս երկու բնութեամբ զմի Քրիստոսն նոքօք փառաւորէք... և ահա ո՛չ կայ ի մէջ մեր մեծ պատճառ, քանզի ըստ բարեպաշտ մտածութեանն մի գտաք»²¹։

Հայոց կաթողիկոսին գրում են նաև հուլյների Միքայել պատրիարքը և 20 հուլյն միտրոպոլիտներ Սինոդի անունից։ Այս նամակներում հուլյներն իրենց 9 զլուխ առաջարկները վերածել էին միայն երկու կետերի՝ դավանել երկու բնություն բացատրությունը և ընդունել Քաղկեդոնի ժողովը։ Երկու նամակներում խնդրվում էր ազգային-եկեղեցական ժողով գումարել և զրավոր կերպով պատասխանել նամակներին, որպէս փաստաթուղթ։

«Եւ աղաչեմ զմեծ զայս և զաստուածավայելուչ գործոյ զյոյս, այսինքն՝ զմիատրութեանս խորհուրդ հաստատել գործով և ստորագրել ձեր աստուածապաշտութեանդ և ամենեցուն որ ընդ ձեզ եպիսկոպոսաց և հարց... այլ և զձեր նամակ զոր մեզ առաքէք, սմին համաձայն ստորագրել ձեզ ըստ մեր աստուածային և սուրբ ժողովոյս օրինակին որ առ ձեզ բացայայտութեանս գրոյ, որք զամենայն օր ի մեզ դաւանութեան խորհուրդ և հաւատոյ ծանուցաք ձեզ»²²։

Այս թղթակցությունից հետո, 1179 թվականին, Գրիգոր Տղան հրավիրեց Հռոմկլայի ժողովը՝ Մանվելի և Սինոդի ուղարկած նամակները քննելու և պաշտոնապէս պատասխանելու համար։ Ըստ Սինոդի թղթի պատասխանի, Հռոմկլայի ժողովին մասնակցել են 33 հոգի, որոնք և ստորագրել են այդ պատասխան թղթի վերջում։ Մասնակցել են

Արեւելյան Հայաստանի մի շարք գավառների և վանքերի առաջնորդներ, ասորի պատգամավորներ և Աղվանից կաթողիկոսը։

Հռոմկլայի ժողովին ուղղություն և ընթացք տվողը Գրիգոր Տղան էր, ներսես Լամբրոնացու և Գրիգոր Ապիրատի աջակցութեամբ։ Ժողովի գումարման և որոշումների դեմ Արեւելյան Հայաստանի նշանավոր վանքերի վանահայրեր դիտողագիր-թղթեր ուղարկեցին կաթողիկոսին, մեղադրելով նրան ինքնագլուխ գործելու, հուլյներին կրոնական զիջումներ անելու և հունասիրութեան մեջ։ Բողոքող այդ նշանավոր վարդապետներն էին «Բասիլ եպիսկոպոս որ յարեւելս հիւսիսոյ, վարդապետ Գրիգոր Սանահին և հայր Յովհաննէս. վարդապետք մայրաքաղաքիս Հաղբատայ՝ Իգնատիոս, Պետրոս, Վարդան և Դաւիթ. Խաչատուր վարդապետ Հաղարծնին, Մխիթար վարդապետ Խորակերտոյ. և միւս Մխիթար վարդապետ Գետկայ և այլք աշակերտեալ ամենեքեան Սրբոց Կտակարանաց Աստուծոյ»²³։ Բացի այդ, մի առանձին բողոքագիր էլ գրել էր Սանահին վանքի առաջնորդ Գրիգոր Տուտեորդին։ Արեւելյան Հայաստանի վանքերը գտնվում էին աշխարհագրական և քաղաքական այնպիսի կացութեան մեջ, որ մի տեսակ մեկուսացել, ամփոփվել էին իրենց բնավայրի սահմաններում։ Սրանք հավատարիմ մնալով նախնայց կրոնական-դավանաբանական ավանդներին, դեմ էին ամեն տեսակ բարենորոգումներին, մանավանդ դավանանքի և ծիսակատարութեան բնագավառներում։ Ստեղծված քաղաքական պայմանները պատճառ էին հանդիսանում հյուսիս-արեւելյան Հայաստանի հայ հոգևորականների համար արդարորեն, թերահավատութեամբ ու կասկածատրութեամբ վերաբերվելու Արեւմուտքից և ընդհանրապես դրսից եկող նորություններին, որոնք Արեւելք էին գալիս խաչակիրների և հուլյների հետ։ Ահա այս հանգամանքներն էին, որոնք իրավունք էին տալիս հյուսիսային հայրենասեր վարդապետներին, ավելի հեռուն գնալով, կասկածելու նույնիսկ Հռոմկլայի ժողովի և Գրիգոր Տղայի ընթացքի ու գործերի վրա։ Իսկ ի՞նչ խնդիրներում հյուսիսային հայերը չէին համաձայնվում Հռոմկլայի ժողովի ու կաթողիկոսի հետ, ինչո՞ւմն էր արտահայտվում նրանց դժգոհությունը։ Ամենից առաջ վերոհիշյալ վարդապետները զարմացել էին, թե ինչպէս Ամենայն Հայոց կաթողիկոսը, առանց բոլոր հայերի կարծիքը առնելու, առանց բուն Հայաստանի հոգևորականներին նախապես իրազեկ

²⁰ «Թուղթ ընդհանրական», էջ 235։

²¹ Նույն տեղում, էջ 240—241։

²² Նույն տեղում, էջ 247։

²³ Նույն տեղում, էջ 427։

պահելու, բանակցության մեջ է մտել հուլիսի 5-ի հետ բազմաթիվ թղթերով և նրանց հետ քննում է կրոնական լուրջ հիմնական խնդիրներ, «Իսկ մեք դարձաք», — գրում են այդ վարդապետները Գրիգոր Տղային, — վասն ձեր լուրջ կատարելալ իմաստութեան, թէ զիստի ոչ նախ ծանուցէք մեզ զձերն վասն հաւատոց նամակ առ նոսա. զի թէ և զլսոյ է կենդանական զօրութիւն անդամոց մարմնոյ, այլ ոչ ներգործէ ինչ զլուս առանց նոցին իսկ կարեւորացն անդամոց յիւրոց ինչ յանկաւոր գործոց»²⁴։ Այս դիտողությունից հետո, թղթի հեղինակները զգուշացնում են կաթողիկոսին, որ հուլիսի ձեռքով հարուցված միութեան գործը, ինչպես մի քանի տարի առաջ, ներսես Շնորհալու օրով, այնպես «Եւ այժմ գրեալքս ի նոցանէ պատրուակեալ յինքեանս ունին զթոյնս դառնութեանն ապականչացն ուղիղ դաւանման...»²⁵։

Ուստի, եզրակացնում են վարդապետները նամակի վերջում, պետք է զգուշ լինել, չընկնել հուլիսի հոգեսպան թակարդը և չհավատալ ո՛չ նրանց թաղավորի և ո՛չ էլ պատրիարքի ո՛չ ասածներին և ո՛չ էլ գրածներին։ Այս պատրաստակամություն են հայտնում միշտ հնազանդիկու և ենթարկվելու «նոյնախոհ ու միաբանեալ ընդ պատուականիդ գլխոյ»²⁶։

Գրիգոր Տղան հանգամանորեն պատասխանել է հյուսիսային վարդապետների և Գրիգոր Տուտեորդու գրած թղթերին։ Ըստ էության եկեղեցիների միության մասին գրված այդ թղթերում շոշափվել են նաև հայ ժողովրդի արեւելյան և արեւմտյան հատվածների հասարակական-քաղաքական կյանքի հետ առնչվող կենսական խնդիրներ։ Այդ ժամանակներում միանգամայն տարբեր էին Արեւելյան Հայաստանի և Կիլիկիայի հայության հասարակական կեցության պայմանները։ Այդ երկու հատված ժողովրդի հոգսերով մտահոգված գիտնական վարդապետները իրենց թղթերում արտահայտում էին նաև իրենց միջավայրի կրոնական-ազգային ձգտումներն ու տրամադրությունները։ Արեւելյան կամ հյուսիսային կոչված հայ գիտնական վարդապետները համոզված էին, որ իրենք են պահում, պահպանում նախնի ապականությունն ու մշակույթը, կրոնական ուղղափառությունը և ընդհանրապես ազգային նկարագիրը։ Կիլիկիայի հոգեւորականությունն էլ, ներսես Շնորհալու և ապա Գրիգոր Տղայի գլխավորությամբ, իրենց գործունեու-

թյան ելակետը դարձրել էին տեղի և մերձակա հունահայատակ հայ ազգաբնակչության կեցության և հոգեկան պայմանները բարելավելու և ազգային ինքնությունությունը ամուր պահելու սկզբունքները։

Ի պատասխան ընդարձակ թղթում Գրիգոր Տղան փորձում է փարատել հյուսիսային վարդապետների տարակուսանքներն ու կասկածները և առիթից օգտվելով առաջ է քաշում մի շարք խնդիրներ, որոնք այն ժամանակ շատ կարևոր էին թե՛ բուն Հայաստանի և թե՛ Կիլիկիայի հայության համար։ Պատասխան թղթի սկզբից կաթողիկոսը գրում է, որ իր կողմից շոշափված հարցերը կապված են ժամանակի, արտաքին աշխարհի հետ ունեցած հարաբերությունների և իրական կյանքի հետ։ Ինչպես ինքն է ասում՝ «ազդմունք արտաքուստ և խորհուրդք սրտից»։ Այնուհետև բացատրում է, որ իր նկրտումների ելակետը ոչ թե անհատական շահերն են կամ փառասիրությունը, այլ ժողովրդի, բազմության վիճակի բարելավումը. «... Զանամք և նկրտմք ոչ միայն անձին հաճոյ լինել, այլ և ընկերին, ի պէտս շինութեան բազմաց, եթէ տացէ Տէր սեւմն և հաց՝ ըստ նախատես բնութեանն վկայեցելոյս»²⁷։

Ներսես Շնորհալին և Գրիգոր Տղան եկեղեցիների միության սկզբունքը հասկանում էին քրիստոնեական լայն ոգով, համաքրիստոնեական սիրով և եղբայրությամբ։ Ահա թե ի՛նչ է գրում Տղան այդ մասին. «Յորթե ի՛նչ է գրում Տղան այդ մասին. «Յորթե և մեք զայս աւանդ պատուիրանի առաք, եթէ ի Քրիստոս Յիսուս չի՛ խորհրդ ո՛չ հրէայ և ո՛չ հեթանոս, ո՛չ ծառայ, և ո՛չ ազատ, ո՛չ քաղաքացի, և ո՛չ անբաժանութիւն, այլ նոր աւարած և որ մի անգամ այսմ կանոնի միաբան լինին և խաղաղութիւն ի վերայ նոցա և ողորմութիւն...»²⁸։ Տղան դեմ է հյուսիսային վարդապետների այն կարծիքին, ըստ որի պետք է հեռու մնալ ընդհանրապես հուլիսներից և նրանց հետ ոչ մի հարաբերություն չունենալ։ Մի՞թե արդար և խոհեմ կլինի, ասում է Գրիգոր Տղան, բոլորովին հեռու մնալ այդպիսի մի հոգեհարուստ ազգից և ինչ որ հունական է, համարել մուլար և վատ։ «Արդ, եթէ զայսպիսի մեծ և զոգչոյն ազգ, յորոց միջի ճոխանայ գիտութիւն... պարտի՞մք մուլարս և տգէտս կոչել և սնտոի լոյս նոցա ի բանս և ի գործս...»²⁹։

Այնուհետև Գրիգոր Տղան հաստատում է, որ ինքը, հանուն Քրիստոսի սիրո, կողմնակից է եկեղեցիների միության. «վասն զի

²⁴ «Թուղթ ընդհանրական», էջ 427։

²⁵ Նույն տեղում, էջ 428։

²⁶ Նույն տեղում, էջ 432։

²⁷ Նույն տեղում, էջ 434 (ընդգծումը մերն է)։

²⁸ Նույն տեղում, էջ 435։

²⁹ Նույն տեղում, էջ 443։

հայ եմ նշմարիտ և աներկբա: սրտիս»³⁰, և հորդորում է արևելյան վարդապետներին. «... Դիտասցիք վասն ժամանակիս, զի ժամ իսկ է ի քնոյ գարթնուլ, զի այժմ մերձ է մեզ փրկութիւն՝ քան յորժամ հաւատացաք, զի լցաւ երկիր ամենայն գիտութեամբ Տեառն իբրև զբազում բոլոր՝ որ ծածկեն զծով, և գիշեր տգիտութեան մերձեցաւ և էանց: Պարտիմք շրջել զգաստս և արթունս և զգեմուլ զգէնն լուսոյ, զի շէն և պայծառ են եկեղեցիք Տեառն, ... և տգիտութիւն հեռի է ամենայն ազգաց քրիստոնէից և վաղ ուրեմն տեսին զլոյս մեծ գիտութեան ժողովուրդն՝ որ նստէին ի խաւարի և ի ստուերս մահու և ամենայն ոք ծարաւի է խաղաղութեան և սիրոյ աստուածայնոյ, ֆռանկի, յոյնի, սիրիացիի, նեստորականի և իսմայելացիի, որ և հալիլիք, յարածամ գիր և բան եռցա ոչ դադարէ առ ի մէնջ վասն խնդոյ մեր, և բազում կան յարկեղս գրոց մեր»³¹: Ապա գոտեպնդիչ կոչ է անում ամբողջ Հայաստանի հոգևորականներին, որ համարձակորեն հանդես գան երկու բնության և քաղկեդոնականության դեմ՝ հանուն ազգային և կրօնական ինքնուրույնության. «Յառաջ կոչեն զմեզ յոյնքն մի անգամ և երկիցս, արդ ո՞չ է պարտ արիւրար ընդդէմ կալ նոցա, կամ հաւանել կամ հաւանեցուցանել, եթէ երկու բնութիւն ասեն չարաչար՝ ըմբերանեցուր և յանդիմանեցուր, և եթէ դարձցին՝ ընկալցուր և շահեցուր զեղբարսն, եթէ լուծան ի պէս պէս աղտեղի գործս մարմնոյ՝ լիցուր պատճառս զղջման նոցա, եթէ ներքինեօք և ներքինապետօք վարին՝ հրապարակեցուր զաղտեղի գործս նոցա... թէ և ոչ այլ ինչ՝ զոնեա զմերս լաւութիւն, և առողջութիւն ծանուցուր»³²: Հյուսիսային վարդապետներին ուղղած պատասխան թղթի մեջ Գրիգոր Տղան հաւելոյն է գալիս որպէս խրատող հայր, մարդասիրութեան ուսուցիչ և հայրենասէր հայ: Սակայն նա այլ ոճ է գործածում Տուտեորդու թղթին պատասխանելիս: Տուտեորդուց մեզ հասած թղթում չկան այն մեղադրանքներն ու խիստ տոնը, անհնազանդ հոգին և կրքոտ ոճը, որի դեմ բողոքում է Գրիգոր Տղան: Գուցե Տուտեորդին ուրիշ թուղթ էլ գրել է Տղային, բայց այդ դեռ մեզ համար մնում է անհայտ: Իր պատասխան թղթում Գրիգոր Տղան մի երկու տեղ քաղվածքներ է անում Տուտեորդու՝ մեզ անհայտ թղթից և նույնպէս խիստ ոճով քննադատում, անվանելով նրան «բանասարկու», «չարամիտ», «հացկա-

տակ», «սուտակասպաս» և այլն: Գրիգոր Տղայի նամակից երևում է, որ նրա վերաբերյալ եղած կասկածները, ինչպէս հյուսիսային վարդապետների գրած նամակում, այնպէս էլ Գրիգոր Տուտեորդու թղթերում եղել են անհիմն: Մի-երկու տեղ Տղան պաշտպանվելով և առարկելով Տուտեորդու մեղադրանքներին, գրում է. «Ընդէ՛ր հրամայես մեզ անկանել և լուել, կամ թէ փոփոխեցա՞ք ինչ անտես առնելով՝ զոր ի նոցանէն և յայլոց ընկալաք, լուաք և առաք նորաձև՝ ինչ՝ անձնահաճ կամօք, այդ մի ինչ անկցի ի սիրտս քո»³³: «ԶՔաղկեդոն ոչ գիտեմ, և ոչ զԼեոն ճանաչեմ (խոսքը Լեոնի տոմարի մասին է—Գ. Հ.) ... հաւատափոխ ոչ լինիմք ըստ քոյդ տարակարծ մտաց»³⁴:

Գրիգոր Տղան եղել է գիր ու գիրք սիրող, գրական ակնհայտ գործիչ և գրող: Գրիգոր Տուտեորդուն գրած մի ուրիշ նամակում, նշելով մեր հայրերից մնացած հոգևոր դանձերի՝ ձեռագրերի ընթերցման և պահպանման մասին, գրում է. «Այլ լաւ համարիմք զմինն մաշկալաթ գրով, քան զգանձ լի ամառով»³⁵: Կիլիկիայի վանքերից շատերն ունեին մատենադարաններ ու դպրատներ, որտեղ ժամանակի ավերիչ ձեռքից փրկված բազմաթիվ ձեռագրեր կային: Այդ ձեռագրերի ու վկայաբանական գրվածքների հավաքման գործով Կիլիկիայում առաջինն զբաղվեց Գրիգոր Վկայասերը: Բայց դեռ էի մասնավոր մարդկանց, առանձնապէս հայ իշխանների մոտ մնում էին արժեքավոր հիշատակարաններ ու ձեռագրեր: Հետևելով իր պապերի օրինակին, Գրիգոր Տղան ևս զբաղվում էր գրքեր և ձեռագրեր հավաքելով՝ դպրատներն ու գրադարանները նոր, արժեքավոր գրքերով հարստացնելու համար: Նույն նամակում նա ասում է. «Չունիմ այլ ինչ ցանկութիւն սրտի, բայց եթէ զաստուածային գրեանս ժողովելով»³⁶, նա միայն Կիլիկիայի սահմաններում եղած գրքերն ու ձեռագրերը հավաքելով չէր սահմանափակվում: Իր թղթերում, արևելյան վարդապետներից էլ է պահանջում այն գրքերը, որոնց կարիքը ինքը կամ Կիլիկիայի դպրատները զգացել են. «Արդ եթէ գտանի առ ձեզ Դիոնէսիոս գիրք, կամ բնութեան, կամ կազմութեան, կամ Զօդիցն (խոսքը Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ի մասին է—Գ. Հ.) կամ Փիլոնի նախախնամութիւն, առաքեսցես ի յիշատակ ձերոյ հօրդ, վասն զի փափագելի է

³⁰ «Թուղթ ընդանրական», էջ 443:

³¹ Նույն տեղում, էջ 454 (ընդգծումը մերն է):

³² Նույն տեղում, էջ 456—457:

³³ «Նամականի», Վենետիկ, 1865, էջ 14:

³⁴ Նույն տեղում, էջ 50:

³⁵ Նույն տեղում, էջ 51:

³⁶ Նույն տեղում:

«հինձ»³⁷։ Իսկ այս գրքերը նա պահանջում էր
անաւ գործնական տեսակետից։ Նամակում
գրում է, որ վերոհիշյալ գրքերը պետք են
իրեն, որպեսզի ավելի հարստացնի իր գիտե-
լիքները և այդ գրվածքներում եղած
փաստերով պայքարի քաղկեդոնականության
ակերտների դեմ. «Զի և մեք ընդդէմ եր-
կարնակացն մարտ եղեալ կոռուսցութ և մի
հաղթահարեսցութ...»³⁸։

Գրիգոր Տղան սերտ կապ է պահել իր ժա-
մանակի հայ մտավորականների հետ։ Մխի-
թար Հերացին ասում է, որ ինքն իր «Զեր-
մանց մխիթարութիւն» գիրքը գրել է Գրիգոր
Տղայի խորհրդով ու հորդորներով։ Հերացին
վկայում է նաև, որ Գրիգոր Տղան հմուտ
գրականագետ է եղել և ուսում ու իմաստու-
թյուն սիրող։ Ահա թե իր գրքի ներածության
մեջ այդ մասին ինչպիսի գովասանքով և
երախտադիտությամբ է խոսում Հերացին.
«Պատճառ առնելով այսմ աշխատութեան և
ղսէր և ղյօժարութիւն սրբոյ և աստուածա-
պատիւ կաթողիկոսին հայոց տեառն Գրիգո-
րի, որ մակալուշի Տղայ։ Սա որ էր առաջնորդ

յԱթոռ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի Հայոց,
զոր տեսի ամենայնիւ սիրող իմաստութեան
և հմուտ։ Եւ յաղագս այսորիկ յօժարեցի ի
պէտս և յօգուտ սորա առնել զգիրքս զայս
ի հոռոմ և յարապիկ, և ի պարսիկ գրեանց
ըստ իմոյ կարողութեանս...»³⁹։

Իրիգոր Տղան, սիրելով ու հովանավորե-
լով գիրն ու գրականությունը, միաժամանակ
և ինքն էլ եղել է ստեղծագործող։ Ինչպես
հիշվեց, նա գրել է շատ արձակ թղթեր ու նա-
մակներ, որոնց մի մասի որոշ կողմերին
մենք ծանոթացանք։ Նա գրել է չափածո մեծ
ու փոքր ոտանավորներ, մանկավարժական
գրվածքներ և պոեմներ։ Արձակ թղթերում
նշանավոր են հյուսիսային վարդապետներին
և Տուսեորդուն գրած թղթերը։ Չափածոյի
մեջ էլ ակնբախ է Գրիգոր Տղայի գլուխ-գոր-
ծոցը համարված «Երուսաղեմի ողբը», որ-
տեղ նա, Շնորհալուն հետեւելով հանդերձ,
դրսևորեց նաև իր անհատականությունը և
ավելի ընդարձակեց միջնադարյան ողբերի
ժանրի շրջանակները։

³⁹ Մխիթար Հերացի, Վենետիկ, 1832, ներածություն։

³⁷ «Նամականի», էջ 51։

³⁸ Նույն տեղում։